

Մարզային միջոցառում՝ Հայոց Սպարապետի ծննդյան տարեդարձի առթիվ

05.03.2016

Սպարապետ Վազգեն Սարգսյանի ծննդյան 57-րդ տարեդարձի առթիվ մարտի 5-ին Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակում անցկացվեց,,Ծնունդդ շնորհավոր, Սպարապետ, պատանի երկրապահների երդման արարողություն,, մարզային հանդիսավոր միջոցառումը: Այն կազմակերպվել էր Գեղարքունիքի մարզպետարանի, ԵԿՄ Գեղարքունիքի մարզային խորհրդի , ԵԿՄ տարածքային բաժանմունքների և Գավառի քաղաքապետարանի համատեղ ուժերով: Արարողությանը մասնակցում էին ԵԿՄ մարզային ստորաբաժանումներից, պատանի երկրապահների ակումբներից , ՀՀ ՊՆ 2-րդ բանակային կորպուսից, մարզի տարածքում տեղակայված զինվորական զորամասերից, քաղաքաշտապանության և արտակարգ իրավիճակների մարզային ստորաբաժանումներից ներկայացված ջոկատները: Հանդիսավոր արարողության մեկնարկին միջոցառման մասնակիցները ծաղիկներ խոնարհեցին Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակն հավերժացնող խաչքարին, որից հետո Գավառի Սուրբ Աստվածածին եկեղեցում տեղի ունեցավ պատանի երկրապահների օրհնության կարգ՝ ձեռամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանի: Հանդիսավոր արարողությունը շարունակվեց քաղաքի հրապարակում, որտեղ մարզի տարածքների սերժանտական ակումբների ավելի քան 300՝ 10-14 տարեկան սաներ հանդիսավոր երդվեցին և համալրեցին պատանի երկրապահների շարքերը: Հնչեցին շնորհավորանքի, ողջույնի, հիշատակի և ոգեկոչման խոսքեր, ընթերցվեցին Սպարապետ Վազգեն Սազսյանի և ԵԿՄ Վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի ուղերձները: Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Անդրանիկ Հակոբյանը ևս շնորհավորեց ներկաներին Հայոց Սպարապետի ծննդյան տարեդարձի և ,,Պատանի երկրապահի,, օրվա առթիվ: ,, Տեսնելով այս պատանի երկրապահներին ակամայից հպարտություն ենք ապրում, քանզի նրանք մեր երկրի վաղվա զինվորն են, մեր հայրենիքը, հողն ու ջուրը պահողն ու պահպանողը: Մենք մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև այն մայրերին, ովքեր, դաստիարակել են մեր երկրի սահմաններն անառիկ պահող զավակներ: Փառք ու պատիվ Հայոց բանակին, հայ զինվորին և ընկած տղերքին,, - իր խոսքում նշեց մարզպետի տեղակալը: Համաժողովրդական տոնի առթիվ ՀՀ ԵԿՄ վարչության նախագահ Մանվել Գրիգորյանի անունից ԵԿՄ վարչության հուշամեդալ և պատվոգիր հանձնվեց զինծառայողների և զոհված ազատամարտիկների մայրերին: Տոնական միջոցառման ընթացքում ցուցադրական ելույթներով հանդես եկան 2-րդ բանակային կորպուսի հետախուզական վաշտը, պատանի երկրապահների Գավառի, Մարտունու, Վարդենիսի, Քարվաճառի և Սևանի ակումբների կարատեի և բռնցքամարտի թիմերը: Միջոցառման

հանդիսավոր մասն ավարտվեց շարային երթով, որն ընդունեց ԵԿՄ Գեղարքունիքի մարզային խորհրդի նախագահ Բագրատ Հարությունյանը: Տոնական արարողությունը շարունակվեց Գավառի քաղաքային ենթակայության մշակութային հաստատությունների սաների երաժշտական կատարումներով: